ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

_____Հայոց լեզվի և գրականության_____
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ՝ Բաբուջյան Հ. Ռ. /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № __8__

«__23__» __հունվար__ 2024 թ.

ՀԼԳ/բ-001 «ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» ԴԱՍԸՆԹԱՑԻ
Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ **023201.00.6** Լեզվաբանություն

Կրթական ծրագիր՝ **032201.01.6** Թարգմանչական գործ (անգլերեն և հայերեն)

Որակավորման աստիճան՝ Լեզվաբանության բակալավր

Ամբիոն՝ Հայոց լեզվի և գրականության

Ուսուցման ձևը՝ առկա

Կուրս/կիսամյակ 1-ին կուրս, 2-րդ կիսամյակ

Դասախոս(ներ) ՝ **Դ. Վ. Գյուլզատյան**
/անուն, ազգանուն/

Էլ. հասցե/ներ՝ davitgiulzadyan@gmail.com

Վանաձոր- 2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում
2. Դասընթացի նպատակը և խնդիրները
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
    - 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
    - 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
    - 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
    - 14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում
    - 14.2. Հարցաշար
    - 14.3. Գնահատման չափանիշներ
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1].

«Լեզվաբանության հիմունքներ» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը կազմված է բակալավրի հիմնական կրթական ծրագրով «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության կրթական չափորոշիչների հենքով կազմված ուսումնական պլանի պահանջների, առարկայի բաղադրիչների հիման վրա և նպատակաուղղված է բակալավրական կրթության կազմակերպմանը, դասավանդման որակի բարձրացմանը: Առարկայական փաթեթը կարգավորում է «Լեզվաբանության հիմունքներ» առարկայի ուսումնամեթոդական նյութերով ապահովման, պարբերաբար թարմացման, գիտաճյուղի նոր մոտեցումների ոգուն համապատասխանեցման գործընթացը, նպաստում է ուսանողի անհատական և ինքնուրույն աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, ուսանողի գիտելիքի հարստացմանը:

2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

2.1. Դասընթացի նպատակն է՝

1. մասնագիտական անհրաժեշտ գիտելիքների մատուցումը, ինչպես նաև ապագա ուսուցչին, գիտնական-հետազոտողին և՝ տեսական, և՝ գործնական-կիրառական կարողություններով և հմտություններով զինելը.

2. ուսանողի գիտակցությանը հասցնել աշխարհի միասնականության սկզբունքը, արտաքին աշխարհի և լեզվական աշխարհի հարաբերակցությունը, դրանց կապը, նույնականությունը, լեզվական իրողությունների նմանակների գոյության իսկությունն արտաքին իրականության մեջ, լեզվական նվազագույն միավորի մեջ անգամ լեզվական համակ համակարգի «տեղավորվածությունը»:

2.2. Դասընթացի խնդիրներն են՝

1. ուսանողներին ուսումնասիրվելիք լեզուների և լեզվի տեսական դասընթացներին նախապատրաստելը՝ տալով լեզվի և նրա ուսումնասիրության տեսության մասին ներածական գիտելիքներ.

2. լեզվական միավորների, մակարդակների հետ կապված խնդիրները քննելը, ինչպես նաև լեզվի, խոսքի և նորմայի ըմբռնումները:

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դասընթացները/

---

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների:

Բուհում «Հայոց լեզու և գրականություն» առարկայի ծրագիրը յուրացնելու համար ուսանողը պետք է ունենա միջնակարգ կրթության «Հայոց լեզու և գրականություն» առարկայի ծրագրով նախատեսված գիտելիքների պաշար:

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2] և /կամ կոմպետենցիաները .

Առարկայի ուսուցման վերջնարդյունքը *Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է իմանա.* Լեզուների կառուցվածքային օրինաչափությունները, ծագումնաբանական և տիպաբանական առանձնահատկությունները, լեզվական համակարգերի և ենթահամակարգերի հարաբերակցությունը, լեզվի բնութագիրը՝ տարբեր հայեցակետերով:
Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է կարողանա. Ցույց տալ լեզվի կառուցվածքային միավորները և արժևորել դրանք՝ որպես խոսքի կառուցման բաղադրիչներ, հայերենի և օտար լեզուների զուգադրությամբ հիմնավորել քերականական իմաստների արտահայտման ընդհանրություններն ու տարբերությունները թեքական, կցական և անջատական լեզուներում, ճանաչել ցեղակից լեզուների ընտանիքները, մասնավորապես՝ հնդեվրոպական լեզվաընտանիքի դուստր լեզուները:
Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է տիրապետի. Լեզվաբանական հետազոտության մեթոդներին ու նրանց եղանակներին, դրանց գործադրումով կատարի հետազոտական աշխատանքներ (կուրսային աշխատանք, զեկուցում, ավարտաճառ և այլն):

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

Ա) Ընդհանրական կոմպետենցիաներ

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝ **ԳԿ1** վերլուծելու և համադրելու ունակություն **ԳԿ4** մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

ՀԳԿ1 գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն, **ՀԳԿ2** հետազոտություններ կատարելու ունակություններ:
Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ) **ԱԿ2** հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները, **ԱԿ3** համապատասխան համատեքստում ընկալել և մեկնաբանել մասնագիտական տեղեկատվությունը:

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[3]

«Լեզվաբանության հիմունքներ» դասընթացից ձեռք բերված գիտելիքներ և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել հայոց լեզվի և գրականության ուսուցչի մասնագիտական գործունեության ընթացքում, նաև ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և լեզվաբանության բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	**4 կրեդիտ/120 ժամ**

Աշխատանքի տեսակը	ժամաքանակ
Դասախոսություն	28
Գործնական աշխատանք	28
Ինքնուրույն աշխատանք	64
Ընդամենը	120
Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն)	Ընթացիկ քննություն

7. **Ուսումնական աշխատանքների տեսակները[4]**

[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել:

[4] Թողնել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

Դասախոսությունը դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:

- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:
- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

  Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[5]՝
  - **<u>Ռեֆերատ</u>** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
  - **<u>Ինքնուրույն աշխատանք համացանցում</u>** – նոր տեղեկատվական տեխ-

[5] Թողնել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

նոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ հա-մացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝** հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք:

9. **Ուսումնառության մեթոդներն են՝** մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[6].

հ/հ	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների				
		դասախոսություն	սեմինար պարապմունք	գործնական աշխատանք	լաբորատոր աշխատանք	Ինքնուրույն աշխատանք
1.	Լեզվաբանությունը և նրա խնդիրները: Լեզվաբանության բաժինները, կառուցվածքը: Լեզվի բնորոշումը: Լեզու, բարբառ, շեղալեզու, ծածկալեզու: Խոսակցական լեզու, գրական լեզու, կենդանի և մեռած լեզուներ: Խոսողություն, լեզու, խոսք	2		2		4
2.	Լեզվաբանության մեթոդները: Պատմահամեմատական մեթոդ: Պատմահամեմատական մեթոդի սկզբունքները: Կառուցվածքային մեթոդ: Պրահայի գործառական կառուցվածքաբանությունը: Կոպենհագենի լեզվագիտությունը՝ գլոսեմատիկա: Ամերիկյան նկարագրական լեզվաբանությունը: Նկարագրական մեթոդի սկզբունքները	2		2		4
3.	Լեզուն որպես հասարակական երևույթ: Լեզուն որպես հաղորդակցման միջոց: Լեզու և մտածողություն: Լեզուն որպես նշանային համակարգ	2		2		4
4.	Լեզուն որպես ստեղծագործություն: Լեզուն որպես գործունեություն:	2		2		4
5.	Լեզուն որպես կառուցվածք: Ստորակարգային մակարդակներ: Լեզուն որպես համակարգ	2		2		4
6.	Ժամանակային հայեցակետեր և լեզվաբանական գիտակարգեր	2		2		4
7.	Հնչյունաբանություն. ընդհանուր ակնարկ: Խոսելու գործարաններ, արտասանական ապարատ: Հնչյունների դասակարգումը: Բաղաձայն/ձայնավոր և բաղաձայն/ձայնորդ/ձայնավոր	2		2		4

[6] Նման է օրացուցային պլանին:

	դասակարգումները					
8.	Հնչյունական օրենք և հնչյունափոխություն: Հնչերանգ, շեշտ, վանկ: Հնչերանգային ուղղախոսություն: Վանկակազմի բնութագիրը: Հնչափոխություն և վանկափոխություն: Վանկապարպում և վանկատոգորում	2		2		4
9.	Հնչուրդ, հնչյուն, հնչույթ: Հնչութաբանական վերլուծություն	2		2		4
10.	Բառագիտություն (ընդհանուր ակնարկ): Բառի սահմանումը: Համաժամանակյա և պատմական բառագիտություն: Իմաստափոխության տեսակներն ըստ իմաստափոխական հիմունքների և իմաստափոխության զարգացման արդյունքների: Բառային կազմ և հիմնական բառամթերք: Բառային կազմի փոփոխությունները: Տերմինագիտություն	2		2		4
11.	Ձևույթ, տեսակները: Ներույթ	1		1		5
12.	Քերականական կարգեր: Քերականական արտահայտության միջոցներ: Խոսքի մասեր և նախադասության անդամներ	1		1		5
13.	Շարահյուսություն և շարութաբանություն: Ստորոգում: Ստորոգիչ, ստորոգյալ, ստորոգելի: Գերակա-ենթակա: Արժութայնություն, անցողականություն և բայասեռ	2		2		4
14.	Լեզուների դասակարգման սկզբունքները: Ծագումնաբանական դասակարգում: Լեզվաընտանիք, լեզվաճյուղ, լեզու	2		2		4
15	Լեզվաբանական տիպաբանություն: Հանրույթներ և տարբերույթներ: Արդի հայերենը՝ որպես թեքակցական կառուցատիպ	2		2		4
	Ընդամենը	28		28		64

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

հ/հ	**Անվանումը/հեղինակ**	**Հրատարակության տարի**
Պարտադիր գրականություն (ՊԳ)		
1.	Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ	1987
2.	Ղափանցյան Գ., Ընդհանուր լեզվաբանություն	1939
3.	Ջահուկյան Գ., Լեզվաբանության պատմություն, հ.I,II	1960, 1962

4.	Սոսյուր Ֆ. դր, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց	2008
Լրացուցիչ գրականություն(ԼԳ)		
1.	Գյուլզատյան Դ., Անցողականության և բայասեռի քերականական կարգերի տիպաբանությունը	2014
2.	Գյուլզատյան Դ., Գրական արևելահայերենի արտահայտաբանություն	2015
3.	Գյուլզատյան Դ., Լեզու/խոսք, լեզու/տեքստ, խոսք/տեքստ և լեզու/խոսք/տեքստ հակադրությունների հարաբերակցությունը	2015
4.	Գյուլզատյան Դ., Քերականական կարգերի համատեղումը ստորոգման մեջ	2014
5.	ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտ, Լեզու և լեզվաբանություն. գիտական հանդես	2003-2016, Երևան
6.	РАН, Вопросы языкознания. գիտական հանդես	2009-2016, Մոսկվա

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

	Թեմա	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Գրականություն[7]
1.	Լեզվաբանությունը և նրա խնդիրները: Լեզվաբանության բաժինները, կառուցվածքը: Լեզվի բնորոշումը: Լեզու, բարբառ, շեղալեզու, ծածկալեզու: Խոսակցական լեզու, գրական լեզու, կենդանի և մեռած լեզուներ: Խոսողություն, լեզու, խոսք	Լեզվաբության քննության առարկան և խնդիրները: Լեզվի հասարակակն և տարածական տարբերակները: Լեզվի տեսության բաժինները: Լեզվաբանական գիտակարգեր	2	ՊԳ 1

[7] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն:

2.	Լեզվաբանության մեթոդները	Պատմահամեմատական մեթոդ: Պատմահամեմատական մեթոդի սկզբունքները: Կառուցվածքային մեթոդ: Պրահայի գործառական կառուցվածքաբանությունը: Կոպենհագենի լեզվագիտությունը՝ գլոսեմատիկա: Ամերիկյան նկարագրական լեզվաբանությունը	2	ՊԳ 1, 2, 3, 4
3.	Լեզուն որպես հասարակական երևույթ: Լեզուն որպես հաղորդակցման միջոց: Լեզու և մտածողություն: Լեզուն որպես նշանային համակարգ	Լեզվական հաղորդակցման կողմերը կամ վերաբերությունները: Գրավոր և բանավոր հաղորդակցում: Բառը որպես նշանային ելակետայինմիավոր:	2	ՊԳ 1, 2, 4
4.	Լեզուն որպես ստեղծագործություն: Լեզուն որպես գործունեություն: Լեզվական գործունեություն, խոսողական գործունեություն, խոսքային գործունեություն	Ֆ. դը Սոսյուրը լեզվական և խոսքային գործունեության մասին: Խնդրի ժամանակակից լեզվաբանական ընկալումները՝ Է. Աղայանի մեկնությամբ	2	ՊԳ 1
5.	Լեզուն որպես կառուցվածք: Լեզուն որպես համակարգ	Լեզուն որպես կառուցվածք: Ստորակարգային մակարդակներ: Լեզուն որպես համակարգ	2	ՊԳ 1
6.	Ժամանակային հայեցակետեր և լեզվաբանական գիտակարգեր	Ժամանակային հայեցակետեր և լեզվաբանական գիտակարգեր	2	ՊԳ 1
7.	Հնչյունաբանություն. ընդհանուր ակնարկ: Խոսելու գործարաններ, արտասանական ապարատ: Հնչյունների դասակարգումը: Բաղաձայն/ձայնավոր և բաղաձայն/ձայնորդ/ձայնավոր դասակարգումները	Լեզվի տեսության բաժինները: Հնչյունաբանություն. ա.հնչույթաբանությունն, բ.հնչյունախոսություն, գ.հնչյունափոխություն, դ.ուղղագրություն և ուղղախոսություն, ե. գրաբանություն և տառադարձություն	2	ՊԳ 1

8.	Հնչյունական օրենք և հնչյունափոխություն: Հնչերանգ, շեշտ, վանկ: Հնչերանգային ուղղախոսություն: Վանկակազմի բնութագիրը: Հնչափոխություն և վանկափոխություն: Վանկապարպում և վանկատոգորում	Վանկ. տեսակները: Հնչյունափոխության տեսակները: Շեշտից կախված հնչյունափոխությունը որպես դիրքային հնչյունափոխություն: Ընդհանուր պատմական և փոխազդեցական հնչյունափոխություն: Հնչափոխություն և վանկափոխություն: Վանկափոխության տեսակները: Հնչյունական օրենքների տարածական և ժամանակային սահմանափակումները; Հայերենին հատուկ հնչյունական օրենքներ	2	ՊԳ 1 ԼԳ 2
9.	Հնչուրդ, հնչյուն, հնչույթ: Հնչութաբանական վերլուծություն	Հնչուրդ, հնչյուն, հնչույթ. առանձնահատկությունները: Հնչութաբանական վերլուծություն	2	ՊԳ 1
10.	Բառագիտություն (ընդհանուր ակնարկ): Բառի սահմանումը: Համաժամանակյա և պատմական բառագիտություն: Իմաստափոխության տեսակներն ըստ իմաստափոխական հիմունքների և իմաստափոխության զարգացման արդյունքների: Բառային կազմ և հիմնական բառամթերք: Բառային կազմի փոփոխությունները: Տերմինագիտություն	Պատմական բառագիտություն: Նկարագրական բառագիտություն: Բառի հասկացությունը: Բառիմաստի փոփոխությունների պատճառները: Իմաստափոխության հիմունքները և բառային կազմի փոփոխությունները: Տերմինագիտություն	2	ՊԳ 1
11.	Ձևույթ, տեսակները: Ներույթ	Հիմնական և երկրորդական ձևույթների բնութագիրը: Հիմնական և քերականական ձևույթներ: Երկրորդական բառակազմական և բառահարաբերա-կան ձևույթներ: Ներույթ	1	ՊԳ1
12.	Քերականական կարգեր: Քերականական արտահայտության միջոցներ: Խոսքի մասեր և նախադասության անդամներ	Քերականական մակարդակի առանձնահատկությունները և միավորները: Ձևաբանություն և խոսքի մասերի դասակարգում. հիմունքներ և սկզբունքներ:	1	ՊԳ 2, 3, 4 ԼԳ 1

13.	Շարահյուսություն և շարութաբանություն: Ստորոգում: Ստորոգիչ, ստորոգյալ, ստորոգելի: Գերակա-ենթակա: Արժութայնություն, անցողականություն և բայասեռ	Նախադասության գլխավոր անդամի խնդիրը: Շարույթի բնորոշումը: Նվազագույն շարույթ, գերշարույթ, լիաշարույթ: Բայի հնարավոր 6 սեռերը հայերենում՝ ըստ ընդհանուր լեզվաբանական հայեցակետի	2	ՊԳ 2, 3, 4 ԼԳ 1, 4 դասախոսություն
14.	Լեզուների դասակարգման սկզբունքները: Ծագումնաբանական դասակարգում	Լեզուների ծագումնաբանական դասակարգումը: Լեզվաընտանիք, լեզվաճյուղ, լեզու	2	ՊԳ 1
15.	Լեզվաբանական տիպաբանություն: Հանրույթներ և տարբերույթներ: Արդի հայերենը՝ որպես թեքակցական կառուցատիպ	Լեզվաբանական տիպաբանություն: Հանրույթներ: Տարբերույթներ: Զուտ թեքական ձուլում, թեքակցական ձուլում, անձույլ կցականություն	2	ՊԳ 1 Դասախոսություն

Գործնական աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

h/h	***Թեմա***	**Ուսումնասիրվող հարցեր**	***Ժամաքանակ***	**Գրականություն**[8]
1.	Լեզվաբանությունը և նրա խնդիրները: Լեզվաբանության բաժինները, կառուցվածքը: Լեզվի բնորոշումը: Լեզու, բարբառ, ժարգոն: Խոսակցական լեզու, գրական լեզու, կենդանի և մեռած լեզուներ: Խոսողություն, լեզու, խոսք	Լեզվաբության քննության առարկան և խնդիրները: Լեզվի հասարակական և տարածական տարբերակները: Լեզվի տեսության բաժինները: Լեզվաբանական գիտակարգեր	2	ՊԳ 1

[8] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն:

2.	Լեզվաբանության մեթոդները	Պատմահամեմատական մեթոդ: Պատմահամեմատական մեթոդի սկզբունքները: Կառուցվածքային մեթոդ: Պրահայի գործառական կառուցվածքաբանությունը: Կոպենհագենի լեզվագիտությունը՝ գլոսեմատիկա: Ամերիկյան նկարագրական լեզվաբանությունը	2	ՊԳ 1, 2, 3, 4
3.	Լեզուն որպես հասարակական երևույթ: Լեզուն որպես հաղորդակցման միջոց: Լեզու և մտածողություն: Լեզուն որպես նշանային համակարգ:	Լեզվական հաղորդակցման կողմերը կամ վերաբերությունները: Գրավոր և բանավոր հաղորդակցում: Բառը որպես նշանային ելակետայինմիավոր:	2	ՊԳ 1, 2, 4
4.	Լեզուն որպես ստեղծագործություն: Լեզուն որպես գործունեություն	Ֆ. դը Սոսյուրը լեզվական և խոսքային գործունեության մասին: Խնդրի ժամանակակից լեզվաբանական ընկալումները: Է. Աղայանի գործունեութենական տեսությունը	2	ՊԳ 1
5.	Լեզուն որպես կառուցվածք: Լեզուն որպես համակարգ:	Լեզուն որպես կառուցվածք: Ստորակարգային մակարդակներ: Լեզուն որպես համակարգ:	2	ՊԳ 1
6.	Ժամանակային հայեցակետեր և լեզվաբանական գիտակարգեր	Ժամանակային հայեցակետեր և լեզվաբանական գիտակարգեր	2	ՊԳ 1
7.	Հնչյունաբանություն. ընդհանուր ակնարկ: Խոսելու գործարաններ, արտասանական ապարատ: Հնչյունների դասակարգումը	Լեզվի տեսության բաժինները: Հնչյունաբանություն. ա.հնչույթաբանութնուն, բ.հնչույթախոսություն, գ.հնչյունափոխություն, դ.ուղղագրություն և ուղղախոսություն, 1. ե. գրաբանություն և տառադարձություն:	1	ՊԳ 1

8.	Հնչյունական օրենք և հնչյունափոխություն: Շեշտ, վանկ: Հնչափոխություն և վանկափոխություն	Վանկ և վանկակազմ: Հնչյունափոխության և վանկափոխության տեսակները: Հայերենին հատուկ հնչյունական օրենքներ	1	ՊԳ 1 ԼԳ 2
9.	Հնչուրդ, հնչյուն, հնչույթ: Հնչութաբանական վերլուծություն	Հնչուրդ, հնչյուն, հնչույթ. Հնչութաբանական վերլուծություն	2	ՊԳ 1
10.	Բառագիտություն (ընդհանուր ակնարկ): Բառի սահմանումը: Իմաստափոխության տեսակներն ըստ իմաստափոխական հիմունքների և իմաստափոխության արդյունքների: Բառային կազմ և հիմնական բառամթերք: Բառային կազմի փոփոխությունները:	Պատմական բառագիտություն: Համաժամանակյա բառագիտություն: Բառի հասկացությունը և բնորոշումը: Բառիմաստի փոփոխությունների պատճառները:	2	ՊԳ 1
11.	Ձևույթ, տեսակները: Ներույթ	Հիմնական և երկրորդական ձևույթների բնութագիրը: Հիմնական և քերականական ձևույթներ: Երկրորդական բառակազմական և բառահարաբերական ձևույթներ: Ներույթ:	2	ՊԳ 1
12.	Քերականական կարգեր: Քերականական արտահայտության միջոցներ: Խոսքի մասեր և նախադասության անդամներ	Քերականական մակարդակի առանձնահատկությունները և միավորները: Քերականական նշանակյալ և նշանակիչ	2	ՊԳ 2, 3, 4 ԼԳ 1
13.	Շարահյուսություն և շարութաբանություն: Ստորոգում: Ստորոգիչ, ստորոգյալ, ստորոգելի: Գերակա-ենթակա: Արժութայնություն, անցողականություն և բայասեռ	Շարահյուսական նվազագույն միավոր և շարահյուսական նվազագույն կառուցվածք: Նվազագույն շարույթ: Գերշարույթ և լիաշարույթ: Գերակա-ենթակա: Ստորոգիչ-ստորոգյակ-ստորոգելի	2	ՊԳ 2, 3, 4 ԼԳ 1
14.	Լեզուների դասակարգման սկզբունքները: Ծագումնաբանական դասակարգում	Լեզուների ծագումնաբանական դասակարգումը: Լեզվաընտանիք, լեզվաճյուղ, լեզու	2	ՊԳ 1

15.	Լեզվաբանական տիպաբանություն: Հանրույթներ և տարբերույթներ: Արդի հայերենը՝ որպես թեքակցական կառուցատիպ	Լեզվաբանական տիպաբանություն: Հանրույթներ: Տարբերույթներ	2	ՊԳ 1 Դասախոսություն

12.1. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

Հ/հ	Ինքնուրույն աշխատանքի թեմաները	Ուսումնասիրվող հարցեր	Աշխատանքի տեսակը[9]	Ներկայացման ժամկետները	Ստուգման ձևը	Գրականություն[10]
1.	Արդի հայերենի և անգլերենի ձայնավորական համակարգերի համեմատությունը	Հայերենի ձայնավորները, անգլերենի ձայնավորները	ռեֆերատ	Կիսամյակի 7-րդ շաբաթ	Գրավոր ներկայացում և գնահատում:	ՊԳ 1 ԼԳ 2
2.	Արդի հայերենի և անգլերենի երկբարբառների համակարգերի համեմատությունը	Երկբարբառներ	ռեֆերատ	Կիսամյակի 7-րդ շաբաթ	Գրավոր ներկայացում և գնահատում	ՊԳ 1 ԼԳ 2
3.	Արդի հայերենի և անգլերենի ձայնորդական համակարգերի համեմատությունը	Ձայնորդական համակարգերը	ռեֆերատ	Կիսամյակի 7-րդ շաբաթ	Գրավոր ներկայացում և գնահատում	ՊԳ 1 ԼԳ 2
4.	Արդի հայերենի և անգլերենի ձայնեղ բաղաձայնների համեմատությունը	Ձայնեղ բաղաձայններ	ռեֆերատ	Կիսամյակի 7-րդ շաբաթ	Գրավոր ներկայացում և գնահատում	ՊԳ 1 ԼԳ 2

[9] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը:
[10] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն:

5.	Արդի հայերենի և անգլերենի շնչեղ խուլ բաղաձայնների համեմատությունը	Շնչեղ խուլ բաղաձայններ	ռեֆերատ	Կիսամյակի 17-րդ շաբաթ	Գրավոր ներկայացում և գնահատում	ՊԳ 1 ԼԳ 2
6.	Արդի հայերենի և անգլերենի շփական բաղաձայնների համեմատությունը	Շփական բաղաձայններ	ռեֆերատ	Կիսամյակի 17-րդ շաբաթ	Գրավոր ներկայացում և գնահատում	ՊԳ 1 ԼԳ 2
7.	Արդի հայերենի և անգլերենի հպաշփական, սուլական և շչական բաղաձայնների համեմատությունը	Հպաշփականներ, սուլականներ և շչականներ	ռեֆերատ	Կիսամյակի 17-րդ շաբաթ	Գրավոր ներկայացում և գնահատում	ՊԳ 1 ԼԳ 2
8.	Արդի հայերենի և անգլերենի ածականների և մակբայների համեմատության աստիճանների տիպաբանությունը	Համեմատության աստիճանների կազմության սկզբունքները	ռեֆերատ	Կիսամյակի 17-րդ շաբաթ	Գրավոր ներկայացում և գնահատում	ՊԳ 1
9.	Արդի հայերենի ներկա, անցյալ անկատար, վաղակատար, անցյալ վաղակատար, անցյալ կատարյալ և անգլերենի ընդհանուր ներկա, ընդհանուր անցյալ, շարունակական ներկա, շարունակական անցյալ, վաղակատար, անցյալ վաղակատար ժամանակների համեմատությունը	Սահմանական ներկա և անցյալ ժամանակների համեմատությունը	ռեֆերատ	Կիսամյակի 17-րդ շաբաթ	Գրավոր ներկայացում և գնահատում	ՊԳ 1

13. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[11]:

Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է քննությամբ:

Քննությամբ ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ քննությունների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով[12]:

---

[11] «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.06.2022թ.):

[12] Կիրառվում է կա՛մ առաջին, կա՛մ երկրորդ պարբերությունն ըստ դասընթացի ամփոփման ձևի:

Ա) «Լեզվաբանության հիմունքներ» առարկայի ընթացիկ ստուգման տարբերակի նմուշ և ամփոփիչ քննության հարցաշար

Ընթացիկ ստուգման նմուշ

Յուրաքանչյուր տարբերակ բաղադրված է 2 տեսական հարցից (ընդհ. 12 միավոր արժեքով) և թեստից (ընդհ. 8 միավոր արժեքով)

ՏԱՐԲԵՐԱԿ

1. Հնչյունական օրենք: (8 միավոր)
2. Քերականական կարգեր. հոլով և դեմք: (4 միավոր)
3. *Թեստ:* (8 միավոր)

ՏԱՐԲԵՐԱԿ

1. Վանկ և շեշտ: (4 միավոր)
2. Լեզուների ծագումնաբանական դասակարգումը: Թուրքական լեզվաընտանիք: (8 միավոր)
3. *Թեստ:* (8 միավոր)

ՏԱՐԲԵՐԱԿ

1. Լեզուն որպես նշանային համակարգ: (6 միավոր)
2. Բառապաշարի հարստացման ուղիները (ներքին և արտաքին): (6 միավոր)
3. *Թեստ:* (8 միավոր)

Թեստի նմուշ՝

1. Նշված տարբերակներից ո՞րն է հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզուներ՝
   ա)հայերեն, տաջիկերեն, ռուսերեն,
   բ) հունարեն, թոխարերեն, պարսկերեն,
   գ)ուկրաիներեն, վրացերեն, հնդկերեն:
2. Լեզվաբանական ո՞ր ուղղության ներկայացուցիչներն էին լեզուն որակում որպես վարք՝
   ա)ապամտածապաշտական
   բ)լեզվաբանական աշխարահագրության
   գ) ֆունկցիոնալ լեզվաբանության

3. Դրանով բառի իմաստը սաստկանում է, բառին հաղորդվում է բազմակիություն, հոգնակիություն: Քերականական արտահայտության ո՞ր միջոցին է բնորոշ ասվածը՝
   ա)մասնիկավորում
   բկրկնություն
   գ) ներքին թեքում
4. Դա կատարվում է տոհմերի, ցեղերի, ժողովուրդների ձուլումների, նրանց միացումների պատմական գործընթացում, երբ ձուլված էթնոսների լեզուներն իրենց

հետքն են թողնում հաղթողի լեզվում: Լեզվական ազդեցության ո՞ր տեսակի մասին է խոսքը՝

ա)փոխառությունների

բ) խաչավորման

գ) լեզվական փոխազդեցություններ

5. Այս կարգի լեզուներում բառի և նախադասության սահմանները հստակ չեն. հաճախ մեկ բառով կարելի է արտահայտել նախադասություն: Տիպաբանական ո՞ր տեսակի մասին է խոսքը՝

ա)թեքական

բ) կցական

գ)վերլուծական

դ)ներմարմնավորյալ

6. Նշված լեզվական միավորներից ո՞րը չի կարող նշան համարվել՝

ա)հնչույթը

բ) բառը

գ) նախադասությունը

Ամփոփիչ քննության հարցաշար

(1-ին ընթացիկ քննություն)

1. Լեզվաբանությունը և նրա խնդիրները:
2. Լեզվի բնորոշումը:
3. Լեզու, բարբառ, շեղալեզու:
4. Խոսակցական և գրական լեզու, կենդանի և մեռած լեզուներ:
5. Խոսողություն, լեզու, խոսք:
6. Լեզվաբանական մեթոդներ (ընդհանուր ակնարկ):
7. Պատմահամեմատական մեթոդ:
8. Պատմահամեմատական մեթոդի տեսական սկզբունքները:
9. Պատմահամեմատական մեթոդի գործնական սկզբունքները:
10. Կառուցվածքային մեթոդ:
11. Կառուցվածքային կամ նկարագրական մեթոդի սկզբունքները:
12. Լեզվի ուսումնասիրության բաժինները:
13. Հնչյունաբանություն:
14. Խոսելու գործարաններ, արտասանական գործարաններ:
15. Ձայնավորների դասակարգումը:
16. Բաղաձայնների դասակարգումը:
17. Հնչութաբանություն:
18. Հնչուրդ-հնչյուն-հնչույթ: Հնչույթի սահմանումները:
19. Վանկ և շեշտ: Հնչարտաբերություն:
20. Հնչյունափոխություն և վանկափոխություն: Տեսակները:

21. Դիրքային և փոխազդեցական հնչյունափոխություն:
22. Ընդհանուր պատմական հնչյունափոխություն, համաբանություն և ընդհանրացում:
23. Լեզուն՝ որպես հասարակական երևույթ:
24. Հնչյունական և գրավոր լեզուներ:
25. Լեզու-հասարակություն կապի բնույթը:
26. Լեզուն որպես հասարակական հաղորդակցման միջոց:
27. Լեզու և մտածողություն:
28. Լեզուն որպես կառուցվածք:
29. Լեզուն որպես համակարգ:
30. Լեզուն որպես նշանային համակարգ:
31. Լեզվական նշանի սոսյուրյան դրույթները:
32. Լեզուն որպես պատմական երևույթ:
33. Լեզուն որպես գործունեություն:
34. Լեզուն որպես վարք:
35. Լեզուն որպես ստեղծագործություն:
36. Լեզուն որպես հոգեբնախոսական գործունեություն:

<u>(2-րդ ընթացիկ քննություն)</u>

1. Քերականական արտահայտության միջոցները:
2. Հնչյունական օրենք:
3. Բառագիտություն (ընդհանուր ակնարկ):
4. Բառի սահմանումը:
5. Բառի ստուգաբանություն, ժողովրդական ստուգաբանություն:
6. Բառիմաստի փոփոխություններ:
7. Բառային կազմի փոփոխությունները:
8. Մաքրամոլություն, արգելք, այլասացություն:
9. Բառային կազմ և հիմնական բառաֆոնդ:
10. Իմաստափոխության հիմունքները:
11. Իմաստափոխության տեսակները:
12. Ձևույթ, տեսակները: Ներույթ
13. Քերականական կարգեր:
14. Սեռի և թվի քերականական կարգեր:
15. Հոլովի և դեմքի քերականական կարգեր:
16. Խոսքի մասեր: Խոսքի մասերի դասակարգման հիմունքները:
17. Շարույթի բնութագրությունը:
18. Ստորոգման բնութագրությունը:
19. Լեզվական ազդեցություններ:
20. Լեզուների դասակարգումը (ընդհանուր ակնարկ):
21. Լեզուների ձևաբանական դասակարգումը:
22. Լեզուների ծագումնաբանական դասակարգումը (ընդհանուր ակնարկ):
23. Հնդեվրոպական լեզվաընտանիք:

24. Սեմական և ուգրաֆիննական ընտանիքներ:

13.1. Գնահատման չափանիշները.

- Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ընթացքում կատարված հարցումների, ինքնուրույն աշխատանքների և ստուգարքների միջոցով:
- Գործնական աշխատանքները՝ չորս ընթացիկ ստուգում՝ 10-ական միավոր գնահատմամբ:
- Ինքնուրույն աշխատանքը՝ երկու հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ:

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ

Մասնագիտություն՝ **023201.00.6** Լեզվաբանություն

Կրթական ծրագիր՝ **032201.01.6** Թարգմանչական գործ (անգլերեն և հայերեն)

Որակավորման աստիճան՝ Լեզվաբանության բակալավր

Վանաձոր 2024

Առկա ուսուցման համակարգ

Դասընթացի թվանիշը, անվանումը	**ՀԼԳ/բ-001 «Լեզվաբանության հիմունքներ»**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	4 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	56	Դասախոսություն	28
			Գործնական աշխատանք	28
	Ինքնուրույն	64		
	Ընդամենը	120		
Ստուգման ձևը	Ընթացիկ քննություն			
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է մասնագիտական անհրաժեշտ գիտելիքների մատուցումը, ինչպես նաև ապագա ուսուցչին, գիտնական-հետազոտողին և՝ տեսական, և՝ գործնական-կիրառական կարողությունների և հմտություններով զինելը:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. ***Գիտելիք*** - *<u>ուսանողը պետք է իմանա.</u>* Լեզուների կառուցվածքային օրինաչափությունները, ծագումնաբանական և տիպաբանական առանձնահատկությունները, լեզվական համակարգերի և ենթահամակարգերի հարաբերակցությունը, լեզվի բնութագիրը՝ տարբեր հայեցակետերով: ***Հմտություն*** - *<u>ուսանողը պետք է կարողանա.</u>* Ցույց տալ լեզվի կառուցվածքային միավորները և արժևորել դրանք՝ որպես խոսքի կառուցման բաղադրիչներ, հայերենի և օտար լեզուների զուգադրությամբ հիմնավորել քերականական իմաստների արտահայտման ընդհանրություններն ու տարբերությունները թեքական, կցական և անջատական լեզուներում, ճանաչել ցեղակից լեզուների ընտանիքները, մասնավորապես՝ հնդեվրոպական լեզվաընտանիքի դուստր լեզուները:			

	Կարողություն - *<u>ուսանողը պետք է տիրապետի.</u>* Լեզվաբանական հետազոտության մեթոդներին ու նրանց եղանակներին, դրանց գործադրումով կատարի հետազոտական աշխատանքներ (կուրսային աշխատանք, զեկուցում, ավարտաճառ և այլն):
Դասընթացի բովանդակությունը	***Թեմա 1*** Լեզվաբանությունը և նրա խնդիրները: Լեզվաբանության բաժինները, կառուցվածքը: Լեզվի բնորոշումը: Լեզու, բարբառ, շեղալեզու, ծածկալեզու: Խոսակցական լեզու, գրական լեզու, կենդանի և մեռած լեզուներ: Խոսողություն, լեզու, խոսք ***Թեմա 2*** Լեզվաբանության մեթոդները: Պատմահամեմատական մեթոդ: Պատմահամեմատական մեթոդի սկզբունքները: Կառուցվածքային մեթոդ: Պրահայի գործառական կառուցվածքաբանությունը: Կոպենհագենի լեզվագիտությունը՝ գլոսեմատիկա: Ամերիկյան նկարագրական լեզվաբանությունը: Նկարագրական մեթոդի սկզբունքները ***Թեմա 3*** Լեզուն որպես հասարակական երևույթ: Լեզուն որպես հաղորդակցման միջոց: Լեզու և մտածողություն: Լեզուն որպես նշանային համակարգ ***Թեմա 4*** Լեզուն որպես ստեղծագործություն: Լեզուն որպես գործունեություն: ***Թեմա 5*** Լեզուն որպես կառուցվածք: Ստորակարգային մակարդակներ: Լեզուն որպես համակարգ ***Թեմա 6*** Ժամանակային հայեցակետեր և լեզվաբանական գիտակարգեր ***Թեմա 7*** Հնչյունաբանություն. ընդհանուր ակնարկ: Խոսելու գործարաններ, արտասանական ապարատ: ***Թեմա 8*** Հնչյունների դասակարգումը: Բաղաձայն/ձայնավոր և բաղաձայն/ձայնորդ/ձայնավոր դասակարգումները Հնչյունական օրենք և հնչյունափոխություն: Հնչերանգ, շեշտ, վանկ: Հնչերանգային ուղղախոսություն: Վանկակազմի բնութագիրը: Հնչափոխություն և վանկափոխություն: Վանկապարպում և վանկատոգորում ***Թեմա 9*** Հնչուրդ, հնչյուն, հնչույթ: Հնչութաբանական վերլուծություն ***Թեմա 10*** Բառագիտություն (ընդհանուր ակնարկ): Բառի սահմանումը: Համաժամանակյա և պատմական բառագիտություն: Իմաստափոխության տեսակներն ըստ իմաստափոխական հիմունքների և իմաստափոխության զարգացման արդյունքների: Բառային կազմ և հիմնական բառամթերք: Բառային կազմի փոփոխությունները: Տերմինագիտություն ***Թեմա 11*** Ձևույթ, տեսակները: Ներույթ ***Թեմա 12*** Քերականական կարգեր: Քերականական արտահայտության միջոցներ: Խոսքի մասեր և նախադասության անդամներ ***Թեմա 13*** Շարահյուսություն և շարութաբանություն:

	Ստորոգում: Ստորոգիչ, ստորոգյալ, ստորոգելի: Գերակա-ենթակա: Արժութայնություն, անցողականություն և բայասեռ ***Թեմա 14*** Լեզուների դասակարգման սկզբունքները: Ծագումնաբանական դասակարգում: Լեզվաընտանիք, լեզվաճյուղ, լեզու ***Թեմա 15*** Լեզվաբանական տիպաբանություն: Հանրույթներ և տարբերույթներ: Արդի հայերենը՝ որպես թեքակցական կառուցատիպ
Գնահատման մեթոդները և չափանիշները	Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ընթացքում կատարված հարցումների, ինքնուրույն աշխատանքների և ստուգարքների միջոցով: Գործնական աշխատանքները՝ չորս ընթացիկ ստուգում՝ 10-ական միավոր գնահատմամբ: Ինքնուրույն աշխատանքը՝ երկու հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ:
Գրականություն	**Պարտադիր գրականություն(ՊԳ)** Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ 1987 Ղափանցյան Գ., Ընդհանուր լեզվաբանություն 1939 Ջահուկյան Գ., Լեզվաբանության պատմություն, հ.I,II 1960, 1962 Սոսյուր Ֆ. դը, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց 2008 **Լրացուցիչ գրականություն(ԼԳ)** Գյուլզատյան Դ., Անցողականության և բայասեռի քերականական կարգերի տիպաբանությունը 2014 Գյուլզատյան Դ., Գրական արևելահայերենի արտահայտաբանություն 2015 Գյուլզատյան Դ., Լեզու/խոսք, լեզու/տեքստ, խոսք/տեքստ և լեզու/խոսք/տեքստ հակադրությունների հարաբերակցությունը 2015 Գյուլզատյան Դ., Քերականական կարգերի համատեղումը ստորոգման մեջ 2014 ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտ, Լեզու և լեզվաբանություն. գիտական հանդես 2003-2016, Երևան РАН, Вопросы языкознания. գիտական հանդես 2009-2016, Մոսկվա